տեսամբ միայն կրնան զերծանիլ։ Մնոր համար եթէ երագագոյնք և արթունք են 'ի շարժմունս ցովազք, Ուռիծք և երկչոտ Վիթք, սոսնց հակառակ Փիղն դանդաղ է. վասն զի իւր թշնամոյն ձեռքէն ազատելու համար բաւական պաշտպանութեան միջոցներ ունի. ինչպէս ժանիք և պատիճ։

127. Պատենային կմախք — Վերոյստորագրեալ կմախք՝ որ 'ի ստոյգ ոսկերաց և յաճառաց կը ձեւանայ, ընդհանրապէս ներքուստ է, և միայն բարձրագոյն դասու կենդանեաց մէջ կը գտնուի։ Բայց աւելի պարզ կազմակերպութիւն ունեցող 'ի բազմաթիւ կենդանիս՝ նոյն կմախքն արտաքուստ մարմնոյն մակերեւութին վրան է և պատենային կմախք կը կոչուի։ Զայն բաղկացնող կարծր մասունքն սովորաբար կրա-



Նկ. 127. Վագր

յին կամ եղջերեայ նիւթերէ կը կազմուին. որով պատենային կմախքն ոչ միայն գրիւք՝ այլ նաև իւր բաղադրութեամբ 'ի ստոյգ կմախքէ կը տարբերի։ Գրեթէ ամենայն խեցեմորթից և բազմաթիւ Կակղամորթից պատենային կըմախքն կրային է մինչդեռ անթիւ Միջատաց, օրինակ իմն Պատենաթեւոց՝ եղջերային է։

Ստոյգ կմախքն յՈղնաւորս ինչ պաշտօն որ կը կատարէ՝ պատենային կմախքն ալ ստորին դասու կենդանեաց մէջ մի և նոյն նպատակին կը ծառայէ։ Այսինքն է, գլխաւոր ադիքներն կը պաշտպանէ, և շարժման ծառայող մըկանքն՝ իւր վրայ հաստատուած են։ Բայց արտաքուստ ըլլալուն պատճառաւ, միանգամայն զմկանս կը պաշտպանէ, և շատ դիպաց մէջ նաև պատսպարութեան գործարան մի է ամբողջ կենդանւոյն։

կը շարունակուի։

Հ. ՊԱՒՂՈՍ ԳՕՖԹԱՆ

---

Հաւկիթները պահելու կերպ — Դնել հաւկիթները բարակ թեփի մէջ. նուրբ ծայրը դէպ 'ի վար։ Այս կերպով պահողը առաջին մրցանակ առաւ Անգղիա 1887ին։ Իսկ երկրորդ մրցանակը առաւ այն՝ որ հաւկիթները մոմով և ձիթով օծած պահեր էր աղի մէջ։ Եւ երրորդ մրցանակը առաւ այն՝ որ ճարպով օծած և կրաջրոյ մէջ դրած էր հաւկիթները, օգէն պահպանելու։

Դիւրին կերպ մ'ալ կայ հաւկիթները մինչև ձմեռուան խոր պահելու համար։ Դնել հաւկիթները սնտուկի մէջ կարգաւ, նուրբ ծայրը դէպ 'ի վար, և աղով ծածկել, և այսպէս կարգ կարգ մինչև սնտուկը լեցուի, և պահել զով տեղ։ Եւ գործածելու ժամանակ շրջել սնտուկը, այնպէս որ տակի հաւկիթները վրայ գան, և կափարչին պտուտակները հանելով, սկսիլ կարգաւ գործածել հետզհետէ։

digitised by A.R.A.R.@